

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1907/B02 «Քաղաքացիական դատավարություն -
2»

Որակավորման
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1907/B02. Զաղաքացիական դատավարություն-2 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (դասախոսություն՝ 40, սեմինար՝ 8, գործնական՝ 16, ինքնուրույն աշխատանք՝ 86 ժամ)
6-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել առանձին կատեգորիայի գործերի հարուցման, նախապատրաստման, քննության և լուծման առանձնահատկություններին, դատական ակտերի վերանայման ու կատարման ընթացակարգերին:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա) մասնագիտական գիտելիք և իմացություն

- մանրամասն ներկայացնել հայցային և հատուկ վարույթների կարգով քննվող քաղաքացիական գործերի հարուցման, նախապատրաստման, քննության և լուծման դատավարական կարգը,
- լուսաբանել դատական ակտերը վերաքննության, վճռաբեկության, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով բողոքարկելու և վերանայելու ընթացակարգերը,
- պազաբանել դատական ակտերի հարկադիր կատարման համակարգը, միջոցները և կատարողական առանձին գործողությունների կատարման կարգը:

բ) գործնական մասնագիտական կարողություններ

- վերլուծել կոնկրետ քաղաքացիական գործեր և լուծել առանձին բարդություն չներկայացնող գործնական խնդիրներ,
- կազմել քաղաքացիական գործի հարուցումը, նախապատրաստումը, դատաքննությունը, վճռահատությունը, դատական ակտերի վերանայումը և հարկադիր կատարումը միջնորդավորող դատավարական փաստաթղթեր:

Գիտելիքների ստուգման ձևերը, մեթոդները և գնահատման չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված են երկու ընթացիկ գրավոր քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ բանավոր քննությամբ՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Գիտելիքների ստուգման մեթոդները և գնահատման չափանիշները ներկայացված են սույն ծրագրում:

ԲԱԺԻՆ I
ՎԱՐՈՒՅԹՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ԵՆԹԱԲԱԺԻՆ I.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹ

ԹԵՄԱ 1.
Քաղաքացիական գործի հարուցումը

1. Հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալները:
2. Հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանները (հայց հարուցելու կարգը):
3. Հայցադիմում. հասկացությունը, ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, կցվող փաստաթղթերը և այլ նյութերը:
4. Հայց հարուցելու կարգը չպահպանելու հետևանքները, հայցադիմումը վերադարձնելու հիմքերը և դատավարական կարգը: Հայցադիմումը կրկին ներկայացնելու կարգը:
5. Հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը և դատավարական կարգը:
6. Հայցադիմումի ընդունումը. հիմքերը, դատավարական կարգը:
7. Քաղաքացիական գործ հարուցելու իրավական հետևանքները:
8. Հատուկ հայցային և ոչ հայցային վարույթների հարուցման առանձնահատկությունները (ընդհանուր բնութագիր):

ԹԵՄԱ 2.
Գործը դատաքննության նախապատրաստելը

1. Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշանակությունը և խնդիրները:
2. Գործը դատաքննության նախապատրաստելու եղանակները: Նախնական դատական նիստի պարտադիր լինելը: Նախնական դատական նիստ նշանակելու հայեցողական լիազորության իրականացման պայմանները:
3. Նախնական դատական նիստ. նշանակելու դատավարական կարգը: Նախնական դատական նիստում կատարվող նախապատրաստական գործողությունների ծավալը, բովանդակությունը և իրականացման դատավարական կարգը:
4. Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննությունը և լուծումը նախնական դատական նիստում:
5. Հաշտարարությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:
6. Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը:
7. Նախնական դատական նիստն ավարտելը և գործը դատաքննության նշանակելը. հիմքերը և դատավարական կարգը: Գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը (ձևը, ընդունման կարգը, ներկայացվող պա-

հանջները):

ԹԵՄԱ 3. Դատական ծանուցումներ

1. Դատավարության մասնակիցների ծանուցումը դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին: Ծանուցման դատավարական նպատակը և սուբյեկտները:
2. Դատական ծանուցագրի ձևը և բովանդակությունը:
3. Դատական ծանուցագիրը և դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) եղանակները:
4. Դատական ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելը: Հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքի միջոցով ծանուցելու պայմանները և կարգը:
5. Դատական ծանուցագիրն առձեռն հանձնելը:
6. Էլեկտրոնային ծանուցում. եղանակները, դատավարական կարգը: Դատական իշխանության պաշտոնական կայքին հետևելու պարտականությունը:
7. Բանավոր ծանուցումը:
8. Գործի քննության ընթացքում հասցեի (Էլեկտրոնային հաղորդակցության միջոցի) փոփոխության մասին դատարանին հայտնելու պարտականությունը:
9. Դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կանոնները: Փաստաթղթերի դեպոնացման մասին հրապարակային ծանուցումը:

ԹԵՄԱ 4. Դատական նիստի ընդհանուր կանոնները

1. Դատական նիստը՝ որպես բանավոր լուսմների դատավարական ձև:
2. Նիստը նախագահողը և նրա գործառույթները:
3. Դատական նիստի նախապատրաստական մասը. խնդիրները, կատարվող դատավարական գործողությունները: Գործին մասնակցող անձանց միջնորդությունների լուծումը:
4. Դատավարության մասնակիցների մասնակցությունը դատական նիստին տեսաձայնային հաղորդակցության միջոցների կիրառմամբ:
5. Նիստում լուսանկարահանում, ձայնագրություն, տեսաձայնագրում, ինչպես նաև նիստի հեռարձակում կատարելու դատավարական կարգը:
6. Նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց վարքագծի հիմնական կանոնները:
7. Դատական սանկցիաներ. հասկացությունը, կիրառման հիմքերը, տեսակները, անձանց շրջանակը, ում նկատմամբ կարող է կիրառվել այս կամ այն սանկցիան, կիրառման դատավարական կարգը, սանկցիա կիրառելու ո-

րոշման ձևը և բողոքարկումը:

8. Գործի քննության հետաձգումը. հասկացությունը, հիմքերը, դատավարական կարգը: Գործի քննությունը հետաձգելու դատարանի հայեցողական լիազորության իրականացման պայմանները:
9. Գործի վարույթի կասեցումը. հասկացությունը, տարբերությունը գործի քննությունը հետաձգելուց, հիմքերը, դատավարական կարգը: Գործի քննությունը վերսկսելը:
10. Դատական նիստի արձանագրումը. հասկացությունը, նշանակությունը և ձևերը: Գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի արձանագրությանը ծանոթանալու և դրա վերաբերյալ դիտողություններ անելու իրավունքները:

ԹԵՄԱ 5.

Դատաքննության և վճռահատության փուլ

1. Գործի դատաքննության փուլի հասկացությունը և նշանակությունը:
2. Դատաքննության նպատակով հրավիրված դատական նիստի բաղկացուցիչ մասերը: Դատական նիստի նախապատրաստական մասը. խնդիրները, կատարվող դատավարական գործողությունները: Գործի ըստ էության քննության մասը. խնդիրները, կատարվող դատավարական գործողությունները:
3. Գործի դատաքննությունն ավարտելը և եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը հայտարարելը:
4. Դատական ակտի նախագիծ ներկայացնելու գործին մասնակցող անձանց իրավունքը:
5. Վճռահատություն և վճռի հրապարակում: Վճիռ կայացնելու կարգը: Վճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը: Գործի քննությունը վերսկսելու հիմքերը և կարգը: Վճռի հրապարակման և գործին մասնակցած անձանց հանձնելու (ուղարկելու) կարգը:

ԹԵՄԱ 6.

Վարույթի ավարտն առանց գործն ըստ էության լուծելու

1. Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը. հասկացությունը, հիմքերը, դատավարական կարգը և հետևանքները: Հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը (ձևը, բողոքարկման կարգը, վերացնելու հետևանքները): Գործի քննությունը վերսկսելը:
2. Գործի վարույթը կարճելը. հասկացությունը, տարբերությունը հայցը (դիմումը) առանց քննության թողնելուց, հիմքերը, դատավարական կարգը և հետևանքները: Գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը (ձևը, բողոքարկումը, վերացնելու հետևանքները):

ԹԵՄԱ 7.

Առաջին առյայնի դատարանի դատական ակտերը

1. Դատական ակտերի հասկացությունը և դասակարգումը. եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր, վճիռներ և որոշումներ:
2. Վճռի էությունը և տեսակները:
3. Դատական որոշումների էությունը և տեսակները: Միջանկյալ դատական ակտերի հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը (առանձին ակտով ձևակերպվող որոշումներ և արձանագրային որոշումներ, բողոքարկման ենթակա և ոչ ենթակա որոշումներ, նախապատրաստական, արգելող և լրացնող որոշումներ):
4. Դատական ակտերին ներկայացվող պահանջները (օրինականություն, հիմնավորվածություն, պատճառաբանվածություն, որոշակիություն, անպայմանականություն, լրիվություն):
5. Վճռի ձևը, կառուցվածքը և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր և հատուկ պահանջները:
6. Առանձին ակտի ձևով կայացվող որոշման բովանդակությունը:
7. Իրավական որոշակիության սկզբունքը և դատական ակտի օրինական ուժը: Օրինական ուժի իրավական հետևանքները (անփոփոխելիություն, բացառիկություն, պարտադիրություն, նախադատելիություն, կատարելիություն):
8. Դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետները: Հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտնող վճիռներ: Վճիռը հրապարակման պահից օրինական ուժի մեջ հայտարարելու հիմքերը: Օրինական ուժի մեջ մտնելու հետևանքները:
9. Դատական ակտերի թերությունների վերացումն այն կայացնող դատարանի կողմից: Լրացուցիչ վճիռ (որոշում). հասկացությունը, կապը հիմնական դատական ակտի հետ, կայացնելու հիմքերը, դատավարական կարգը և ժամկետները: Վրիպակների և թվաբանական սխալների ուղղումը. հիմքերը, սահմանները, դատավարական կարգը և ժամկետները:

ԵՆԹԱԲԱԺԻՆ II.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ

ԹԵՄԱ 8.

Հատուկ հայցային վարույթներ

1. Հատուկ հայցային վարույթների էությունը և տեսակները:
2. Ընտանեկան գործերով վարույթի առանձնահատկությունները:

3. Առանձին աշխատանքային վեճերով գործերի քննության և լուծման առանձնահատկությունները:
4. Կորպորատիվ վեճերով գործերի քննության և լուծման առանձնահատկությունները:
5. Խմբային հայցի հիման վրա քննվող գործերով վարույթի առանձնահատկությունները:
6. Հատուկ հայցային այլ վարույթներ:

ԹԵՄԱ 9.

Հատուկ վարույթներ

1. Հատուկ վարույթների հասկացությունը, հատկանիշները և տեսակները: Հատուկ վարույթների գործերի քննության կարգը:
2. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով վարույթի առանձնահատկությունները:
3. Քաղաքացու որոշակի կարգավիճակ հաստատելու վերաբերյալ գործերով վարույթների առանձնահատկությունները (անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու, քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու, քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու և մահացած հայտարարելու, երեխային որդեգրելու, անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու, քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով վարույթները):
4. Կորցված իրավունքների վերականգնման վերաբերյալ գործերով վարույթը (կոչի վարույթ):
5. Շարժական գույքը տիրագուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու գործերով վարույթի առանձնահատկությունները:
6. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճիռը վերանայելու վարույթը:
7. Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ գործերի վարույթը:

ԹԵՄԱ 10.

Ոչ հայցային այլ վարույթներ

1. Ոչ հայցային այլ վարույթների տեսակները, ընդհանուր բնութագիրը և

սահմանազատումը հատուկ վարույթներից:

2. Արբիտրաժի վճիռը վիճարկելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռները ճանաչելու ու կատարելու, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով վարույթները:
3. Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով վարույթները:
4. Օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը:

ԵՆԹԱԲԱԺԻՆ III. ՈՉ ՀԱՅՅԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԹԵՄԱ 11.

Պարզեցված ընթացակարգերը քաղաքացիական դատավարությունում

1. Պարզեցված ընթացակարգերի եռթյունը, տեսակները և հիմնական առանձնահատկությունները:
2. Արագացված դատաքննություն. կիրառման հիմքերը, դատավարական կարգը:
3. Պարզեցված վարույթ. կիրառման հիմքերը, դատավարական կարգը:
4. Հեռակա դատաքննություն. կիրառման հիմքերը, դատավարական կարգը:
5. Վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը:

ԲԱԺԻՆ III ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

ԹԵՄԱ 12.

Դատական ակտերի վերանայումը վերաքննության կարգով

1. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և վերաքննության տեսակները. լրիվ վերաքննություն և ոչ լրիվ վերաքննություն:
2. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք: Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը: Վերաքննիչ բողոք բերելու ժամկետները: Վերաքննիչ

բողոք բերելու սահմանափակումները:

3. Դատական սխալի հասկացությունը: Վերաքննիչ բողոք բերելու (դատական ակտը բեկանելու) հիմքերը. նյութական իրավունքի խախտումները, դատավարական իրավունքի խախտումները, նոր և նոր երևան եկած հանգամանքները:
4. Վերաքննիչ բողոք բերելու կարգը: Վերաքննիչ բողոքի կառուցվածքը և բովանդակությունը:
5. Վերաքննիչ բողոքը վերադարձնելը. հիմքերը, հետևանքները, դատավարական կարգը:
6. Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելը. հիմքերը, հետևանքները, դատավարական կարգը:
7. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը: Վերաքննիչ բողոքի պատասխանը:
8. Վերաքննիչ բողոքից հրաժարվելու հետևանքները:
9. Վարույթ ընդունված վերաքննիչ բողոքի քննության կարգը և ժամկետները: Բողոքի քննությունը գրավոր և բանավոր ընթացակարգով:
10. Վերաքննիչ բողոքի քննության սահմանները: Վերաքննիչ դատարանի իրավունքը նոր փաստեր հաստատված կամ ժխտված համարելու և նոր ապացույցներ հետազոտելու հարցում:
11. Ապացույցների ընդունումը և նոր ապացույցների հետազոտումը վերաքննիչ դատարանի կողմից:
12. Վերաքննիչ դատարանի լիազորությունները:
13. Վերաքննիչ դատարանի որոշումը և դրա օրինական ուժը:
14. Դատական ակտում առկա թերությունների վերացումը վերաքննիչ դատարանի կողմից:
15. Վերաքննիչ դատարանի որոշման կատարման ապահովումը:

ԹԵՄԱ 13.

Դատական ակտերի վերանայումը վճռաբեկության կարգով

1. Վճռաբեկ վարույթի հասկացությունը և խնդիրները:
2. Դատական ակտերը վճռաբեկության կարգով բողոքարկելու իրավունքը: Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք: Վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը: Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները: Վճռաբեկ բողոք բերելու սահմանափակումները:
3. Վճռաբեկ բողոք բերելու (դատական ակտերը բեկանելու) հիմքերը. նյութական իրավունքի խախտումները, դատավարական իրավունքի խախտումները, նոր և նոր երևան եկած հանգամանքները:
4. Վճռաբեկ բողոք բերելու կարգը: Վճռաբեկ բողոքի կառուցվածքը և բովանդակությունը:
5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը:
6. Վճռաբեկ բողոքը վերադարձնելը. հիմքերը, հետևանքները, դատավարական կարգը:

7. Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը. հիմքերը, հետևանքները, դատավարական կարգը:
8. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը. հիմքերը, հետևանքները, դատավարական կարգը:
9. Վճռաբեկ բողոքից հրաժարվելու հետևանքները:
10. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը. հիմքերը և դատավարական կարգը:
11. Վճռաբեկ բողոքի պատասխանը:
12. Վարույթ ընդունված բողոքի քննության կարգը վճռաբեկ դատարանում: Բողոքի քննությունը գրավոր և բանավոր ընթացակարգով:
13. Վճռաբեկության սահմանները:
14. Վճռաբեկ դատարանի լիազորությունները:
15. Վճռաբեկ դատարանի որոշումները, դրանց օրինական ուժը և իրավական բնույթը:
16. Դատական ակտում առկա թերությունների վերացումը վճռաբեկ դատարանի կողմից:

ԹԵՄԱ 14.

Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով

1. Նոր երևան եկած և նոր հանգամանքների հասկացությունը:
2. Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայող դատարանը:
3. Վերանայման բողոք բերելու իրավունքը և դրա իրականացման նախադրյալները:
4. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը:
5. Վերանայման բողոքի կառուցվածքը և բովանդակությունը:
6. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքը վարույթ ընդունելը:
7. Բողոքը վերադարձնելու հիմքերը և կարգը:
8. Դատական ակտի վերանայման բողոքն առանց քննության թողնելը և բողոքը վարույթ ընդունելը մերժելը:
9. Վերանայման քննության կարգը և դատարանի որոշումը:
10. Դատական ակտը վերանայող դատարանի լիազորությունները:

ԹԵՄԱ 15.

Բեկանված եզրափակիչ ակտերով գործերի նոր քննությունը

1. Բեկանված եզրափակիչ ակտով գործի նոր վարույթ հարուցելը. ժամկետները, դատավարական կարգը: Դատարանի կազմը:
2. Գործի նոր քննության կարգը և սահմանները:

ԲԱԺԻՆ IV
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԵՐՈՎ
ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱԶԱԿՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ

ԹԵՄԱ 16.

**Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթի
առանձնահատկությունները**

1. Օտարերկրյա անձանց քաղաքացիական դատավարական իրավունքները և պարտականությունները: Օտարերկրյա անձանց քաղաքացիական դատավարական իրավունքների սահմանափակումները:
2. ՀՀ դատարանների բացառիկ ընդդատությունը օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով:
3. Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերով ՀՀ դատարանների իրավասությունը: Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի ընդդատությունը որոշելու կանոնները:
4. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դեմ հարուցվող հայցեր: Դատական իմունիտետի հիմնախնդիրը:
- 5.
6. Քաղաքացիական դատավարության ոլորտում միջազգային համագործակցության ձևերը. իրավական օգնություն ցույց տալը, իրավունքի հարցերով տեղեկատվություն փոխանակելը, օտարերկրյա դատարանների և արբիտրաժների վճիռների ճանաչումը և կատարումը:
7. Իրավական օգնության հարցերով համագործակցության կարգը: